ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2026/10

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՏՀԲՄԾ-2026/7 ԵՎ ԿՏՀԲՄԾ-2026/8 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«23» մարտ 2026 թվական ք. Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով՝ Լուիզա Սարգսյանի, Տիգրան Ծատուրյանի և Ռուզաննա Առաքելյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածի 11-րդ կետով, որոշեց.

1. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2026/7 և ԿՏՀԲՄԾ-2026/8 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ կետի պահանջներին:

2. «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2026/7 և ԿՏՀԲՄԾ-2026/8 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ կետի պահանջներին:

3. ԿՏՀԲՄԾ-2026/7 և ԿՏՀԲՄԾ-2026/8 ծածկագրերով մրցույթների հրապարակային վիճակահանության փուլին մասնակցության իրավունք ստացող կազմակերպություններն են՝ «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ն և «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն:

4. ԿՏՀԲՄԾ-2026/7 և ԿՏՀԲՄԾ-2026/8 ծածկագրերով մրցույթների հարապարակային վիճակահանության նիստի անցկացման օրը և ժամը նշանակել 2026 թվականի մարտի 24-ին՝ ժամը 11:00-ին:

5. Սույն որոշումն ուղարկել մրցութային առաջարկներ ներկայացրած աուդիտորական կազմակերպությունների էլեկտրոնային փոստի հասցեներին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ **Լուիզա Սարգսյան**